

տիտղոսին տակ կազմուած Հայ. Կաթողիկ Եկեղեցիով (1830):

Ահա ընդհանուր եւ կարկառուն գծերը այն ժամանակներուն, որոնց մէջ միայն Կոլոտի ընդգրկած շրջանը նիւթ ընտրեցի ամփոփ ուսումնասիրութեան մը:

Կոլոտ՝ միշտ հետաքրքրած էր զիս, մանաւանդ նախանով, Կոլոտի Դպրոցին ամէնէն փայլուն դէմքերէն մէկը. ես որ Կոլոտին զարգացած միջավայրը տեսայ, համբուրեցի Բարսղի եւ Վարդանի, այս մեծ վարդապետներուն շիրիմները, Ամրոտլու Տաճարին մէջ. այո՛, տեսայ Ամրոտլի «Համալսարան»-ին ու մատենադարանին նշխարքը, քննեցի այն արտաքին գիտութեանց ձեռագիր դասագրքերը, Անյաղթի թարգմանած գործերուն վրայ, որոնց մէջ անշուշտ Կոլոտի եւ Շղթայակրի գործածածներն ալ կային. տքնեցայ իրենց տքնած, վերաշինած Ս. Կարապետի համար եւ վերջապէս, երբ զարմանալի զուգահէտութեամբ մը, այս տեղ ալ, Ղաւթիա, Ս. Լուսաւորչի մենաւոր պատերուն մէջ՝ կը կենակցիմ՝ հիմայ Կոլոտին՝ մօտը իր շիրմին, ահա իր մահուան տարեդարձին մերձեցումը, († 1741 Փետրվար 13) ամէնէն յարմար առիթը կ'ընծայէ ինծի՝ որ իր մասին

1 Այս շրջանին մէջ, սակայն, չբոքեցի Կիլիկիոյ Կաթողիկոսութեան վերաբերեալ խնդիրները, մասնաւորապէս Աբրահամ Արծիւեանի, Հալէպի այս 62 տարեկան Առաջնորդին Կաթողիկացումը եւ անուանական Կաթողիկոսութիւնը, որուն հետ ուղղակի եւ պաշտօնապէս գործ ունեցաւ Կոլոտ: Այս խնդրին ուսումնասիրութիւնը ո՛չ միայն աւելի պիտի ընդարձակէր առաջադրուած ծրագիրը, այլ նաեւ պէտք եղած նիւթերն ալ լոյս չին տեսած դեռ: — Կոլոտի նուիրուած այս գործը խմբագրած էի արդէն, երբ այդ կարգի նիւթերէն քանի մը հատը տեսայ «Վարդ Մխիթարայ Աբրայի» (գրեց Հ. Յով. Վ. Թորոսեան 1901 Վենետիկ) Յառնորածին մէջ (էջ 462 եւ հետեւ.):

2 Կոլոտը գրելու ձեռնարկած եմ 1902 Փետրվար 4ին. իսկ Փետր. 14ին, Եջ. Տեանընդառաջին, Կոլոտի մահուան 161րդ տարեդարձին առթիւ Ս. Լուսաւորչի մէջ յատկապէս հոգեւոր հանդէս մը սարքեցի՝ անձամբ պատարագելով եւ քարոզելով: Նոյն հանդէսը